

№ 17, ՉՎՄ, ԿԿԲ.

Հայոց խաչապաշտ թագաւոր Կոմրի¹

Մանիշակ² թագապաշտ թագաւոր².

Սանասար³

Բաղդասար³

Քեառսուն-ձող-ծամ Գըհար⁴.

1. Ա, § 1, 11:—2. Ա, § 10, 20, 24:—3. Ա, § 37—45:—
4. Ա, § 146, 171:

§ 2. Մեր երեք նոր փոփոխակները Արարատին տպագրութեան յանձնելով խոստացել էինք մի յառաջարան գրել¹, որով իհարկէ պէտք է բացատրէինք այս երեքի ինչպէս և առհասարակ նոր փոփոխակների հրատարակութեան կարևորութիւնը:

Եթէ այսքան փոփոխակների հրատարակութիւնից յետոյ ևս վստահացայ այս երեքն ևս ի լոյս ընծայելու, պատճառը մեր այս ժողովրդական ղիւցազնավէպի մեծ նշանակութիւնն է:

Մի ազգի կեանքը ոչ մի պատմագրութիւն չէ կարող այնպէս արտայայտել, ինչպէս ժողովրդի ստեղծագործութիւնը. և մեր ղիւցազնական այս վէպը այնպիսի նշանակութիւն ունի մեզ համար ինչպէս Հոմերոսը Յոյների, Շահնամէն Պարսիկների, Նիրելունդների երգը Գերմանացոց և Կալիվալան Ֆինլանդացոց համար: Այս ղիւցազնավէպը ներկայացնում է հայութեան դարաւոր կռիւք բարբարոսութեան և հայ-քրիստոնէութեան մաքառումը մահմեդականութեան դէմ, յաղթանակի ապահով գիտակցութեամբ: Իզուր չէ, որ Դաւիթը Մըսրայ Մելիքին ասում է. «Աստըծուց այնպէս գրած չէ, որ մեր ազգը ձեր ազգի դէմ փախնի»², իսկ միւս ղիւցազնը, Մհէրը, Բուլընկի դէին յայտնում. «Աստըծուց բացի մենք, մեր ազգը մարդից չենք վախենայ»³. Գերմանիայում առած դարձած խօսք, որ դարեր յետոյ Բիւսմարկը շպուտեց իւր հայրենիքի ոսոխներին: Զոջանց տան վէպի այս երկու ղիւցազների երկու խօսքը

1. Արարատ 1909, թիւ 5, էջ 244.

2. № 40. Բ, էջ 442:

3. Անգ. Գ. էջ 454: